ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«10» 06 2025թ. N 598-Լ

ք.Երևան

ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ (ԿԵՆՏՐՈՆԻՆ) ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԵՎ ԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մայիսի 8 N 563-Ն որոշման 13-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը՝

հրամայում եմ՝

1. Հաստատել՝ Գիտական կազմակերպությանը (կենտրոնին) ռիսկի գնահատում իրականացնելու լիազորություններ տալու վերաբերյալ ներկայացված հայտի և կից փաստաթղթերի ուսումնասիրության հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել՝ Գիտական կազմակերպությանը (կենտրոնին) ռիսկի գնահատում իրականացնելու լիազորություններ տալու վերաբերյալ ներկայացված հայտի և կից փաստաթղթերի ուսումնասիրության ընթացակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

3.Սույն հրամանի նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալին:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարի
2025 թվականի -10 հուլիսի-ի
N 1599 -Լ հրամանի

ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ (ԿԵՆՏՐՈՆԻՆ) ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ և ԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության սննդամթերքի անվտանգության վարչության պետ (հանձնաժողովի նախագահ)

ՀՀ էկոնոմիկայի նախարարության իրավաբանական վարչության պետ կամ բաժնի պետ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության անասնաբուժության բաժնի պետ կամ գլխավոր մասնագետ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության սննդամթերքի անվտանգության բաժնի պետ կամ գլխավոր մասնագետ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության բուսասանիտարիայի բաժնի պետ կամ գլխավոր մասնագետ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերության մասնագետ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական աստիճան ունեցող գիտական աշխատող (համաձայնությամբ)

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի -----
10 մարտի-ի N 1599 -Լ հրամանի

ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ (ԿԵՆՏՐՈՆԻՆ) ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԵՎ ԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգով կանոնակարգվում են գիտական կազմակերպությանը (կենտրոնին) (այսուհետ՝ գիտական կազմակերպություն) սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ռիսկի գնահատումն իրականացնելու լիազորություններ տալու վերաբերյալ ներկայացված հայտի և կից փաստաթղթերի ուսումնասիրության ընթացակարգի հետ կապված հարաբերությունները:
2. Գիտական կազմակերպությանը (կենտրոնին) ռիսկի գնահատում իրականացնելու լիազորություններ տալու վերաբերյալ ներկայացված հայտի և կից փաստաթղթերի ուսումնասիրության ընթացքում հանձնաժողովը

(այսուհետ՝ հանձնաժողով) իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3. Հանձնաձողովը կազմված է յոթ անդամից:
4. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ լիազոր մարմին) համապատասխան ստորաբաժանման ղեկավարներ կամ մասնագետներ, Հայաստանի ազգային ագրարային համալսարանից գիտական աստիճան ունեցող գիտական աշխատող, ինչպես նաև «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերության մասնագետ:
5. Հանձնաժողովը բաղկացած է հանձնաժողովի նախագահից և անդամներից:
6. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան ներկա են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:
7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մայիսի 8-ի N 563-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) համաձայն՝ սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ռիսկի գնահատումն իրականացնելու լիազորություն ստանալու համար լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ: Հայտը և որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով սահմանված չափանիշների վերաբերյալ փաստաթղթերը ներկայացվում են երկշաբաթյա ժամկետում:
8. Յուրաքանչյուր հայտի և կից ներկայացված չափանիշների հավաստիության ուսումնասիրության և համապատասխանության վերաբերյալ փաստաթղթերի ամբողջականության, եզրակացության տրամադրման համար լիազոր մարմնի

կողմից հայտարարությունը տալու օրը, լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ստեղծվում է հանձնաժողովի անհատական կազմը (այսուհետ՝ հանձնաժողով):

9. Սույն հրամանի 7-րդ կետով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հաջորդ օրը, հանձնաժողովի նախագահը ներկայացված հայտի և կից փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով հրավիրում է հանձնաժողովի նիստ:
10. Հայտը ներկայացնելուց հետո մեկօրյա ժամկետում հայտում և կից փաստաթղթերում տեխնիկական բնույթի սխալներ, ջնջումներ, վրիպակներ հայտնաբերելու կամ ներկայացված փաստաթղթերը թերի լինելու դեպքում հանձնաժողովը տեղեկացնում է դրա մասին հայտատուին՝ հնարավորություն տալով եռօրյա ժամկետում շտկել թերությունները:
11. Հայտը ներկայացնելուց հետո եռօրյա ժամկետում տեխնիկական բնույթի թերությունները շտկելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ նաև հայտատուն:
12. Ակնհայտ կեղծ փաստաթղթեր ներկայացնելու, որոշմամբ սահմանված բոլոր փաստաթղթերը չներկայացնելու և սահմանված ժամկետում թերությունները չշտկելու դեպքում՝ հայտը մերժվում է և երկու աշխատանքային օրվա ընթացքում թղթային կամ էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի կողմից տեղեկացվում է հայտատուին:
13. Հանձնաժողովի կողմից փաստաթղթերի ուսումնասիրությունը իրականացվում է տաս աշխատանքային օրվա ընթացքում:
14. Մրցույթի յուրաքանչյուր հայտը և կից փաստաթղթերը ուսումնասիրվում են հանձնաժողովի կողմից հետևյալ միավորների համակարգով՝ առավելագույնը 5 միավոր, նվազագույնը՝ 0:
15. Եթե հայտարարված մրցույթին դիմել է մեկ մասնակից և հանձնաժողովի կողմից հայտին կից փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում ընդհանուր միավորը կազմում է առնվազն 33 (նվազագույն շեմ) և առանձին գնահատականներից որևէ մեկը ցածր չէ 3 միավորից, ապա հանձնաժողովը

կազմում է եզրակացություն նվազագույն միավոր հավաքած գիտական կազմակերպությանը որպես ռիսկի գնահատման գիտական կենտրոն լիազորելու վերաբերյալ:

16. Եթե հայտարարված մրցույթին դիմել են մեկից ավելի կազմակերպություններ, ապա հանձնաժողովը կազմում է եզրակացություն առավելագույն միավոր հավաքած գիտական կազմակերպությանը որպես ռիսկի գնահատման գիտական կենտրոն լիազորելու վերաբերյալ:
17. Սույն հրամանի 13-րդ կետում սահմանված ժամկետի ընթացքում փաստաթղթերի ուսումնասիրության ավարտից հետո՝ հաջորդ օրը, հանձնաժողովի նախագահը լիազոր մարմնի ղեկավարին է ներկայացնում (մեկից ավելի մասնակցի դեպքում՝) առավելագույն միավոր հավաքած գիտական կազմակերպությանը ռիսկի գնահատում իրականացնելու լիազորություն տալու վերաբերյալ եզրակացությունը, իսկ (մեկ մասնակցի դեպքում՝) նվազագույն միավոր հավաքած գիտական կազմակերպությանը ռիսկի գնահատում իրականացնելու լիազորություն տալու վերաբերյալ եզրակացությունը:
18. Լիազոր մարմնի ղեկավարը հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացված եզրակացությունը ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է հրաման՝ (մեկից ավելի մասնակցի դեպքում)՝ առավելագույն միավոր հավաքած, իսկ (մեկ մասնակցի դեպքում)՝ նվազագույն շեմը հաղթահարած գիտական կազմակերպությանը ռիսկի գնահատում իրականացնելու լիազորություն տալու մասին:
19. Գիտական կազմակերպությանը ռիսկի գնահատում իրականացնելու լիազորություն տալու մասին հրամանը և եզրակացությունը հանձնաժողովը երեք աշխատանքային օրվա ընթացքում առձեռն տրամադրում է հայտատուին, իսկ հիմնավոր պատճառների առձեռն հանձնելու հնարավորություն չլինելու դեպքում՝ էլեկտրոնային եղանակով:

20. Որոշմամբ սահմանված չափանիշներին չհամապատասխանելու դեպքում՝ հանձնաժողովը կազմում է սահմանված չափանիշներին չհամապատասխանելու մասին անհամապատասխանության վերաբերյալ եզրակացություն:
21. Սույն հրամանի 13-րդ կետում սահմանված ժամկետի ընթացքում փաստաթղթերի ուսումնասիրության ավարտից հետո՝ հաջորդ օրը, հանձնաժողովի նախագահը լիազոր մարմնի ղեկավարին է ներկայացնում անհամապատասխանության վերաբերյալ եզրակացությունը:
22. Լիազոր մարմնի ղեկավարը անհամապատասխանության վերաբերյալ եզրակացությունը ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է հայտը մերժելու վերաբերյալ հրաման և երեք աշխատանքային օրվա ընթացքում հրամանը և եզրակացությունը միասին թղթային կամ էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի կողմից տրամադրվում է հայտատուին:
23. Լիազոր մարմինը պարտավոր է երաշխավորել Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մայիսի 8-ի N 563-Ն որոշման համաձայն լիազոր մարմին ներկայացված հայտատուների փաստաթղթերի գաղտնիությունը, առևտրային գաղտնիքի և անձնական տվյալների պաշտպանությունը:
24. Սույն հրամանով սահմանված ընթացակարգի ավարտից հետո հանձնաժողովը դադարեցնում է իր գործունեությունը:
25. Հայտատուն սույն հրամանով սահմանված մերժման վերաբերյալ եզրակացությունը կարող է բողոքարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: